ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2021

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ *չկա:***

Երկար ժամանակ Հեփեստոսն իր սրտում անտեղված(1) էր պահում իր դժխեմ(2) մոր հանդեպ տածած ցասումը: Ի վերջո նա որոշեց իրեն քարնկեցից(3) նետահարելու համար վրեժխնդիր լինել մորից: Նա արտասովոր գեղեցիկ մի ոսկեզօծ(4) օթոց կռեց և իբրև նվեր ուղղարկեց(5) Օլիմպոս՝ մորը: Սքանչացավ(6) շանթարցակ(7) Զևսի կինը՝ Հերան: Հենց նա նստեց բազմոցին, պատվեց անքակտելի կապանքներով և գամված(8) մնաց բազկաթոռին: Ստիպված եղան հրավիրել դարբին(9) աստծուն:

1) 1, 3, 4, 5, 8, 9
2) 2, 3, 6, 7, 8
3) 2, 4, 6, 8, 9
4) 1, 2, 4, 5, 7, 9

2 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԵՋՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, ՔԵՈՓՍԻ ԲՈՒՐԳ, ԱՐՏԵՄԻՍԻ ՏԱՃԱՐ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ
2) ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ, ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՌՈԴՈՍԻ ԿՈԹՈՂ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ
3) ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ, ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԴԱՆ
4) ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ԷՋՄԻԱԾՆԻ ՍԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ջ:***

1) մար-ան, բաղար-, խո-կոր, գա-
2) ող-ամիտ, զեղ-ել, արջառոր-, շեղ-ակույտ
3) կապար-, լա-վարդ, մի-և, գաղ-
4) զղ-ալ, չղ-իկ, ստեր-, խառնիճաղան-

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում սղում կա:**

1) մածնաթան, թախծամրմունջ, կղզեխումբ, արնանման
2) ոճրագործ, բուրավետ, երկրաբան, վրեժխնդրություն
3) գործնական, անթացուպ, դստրիկ, կենդանական
4) լրջմիտ, հանրային, մանրամասն, ծաղկաշղթա

5 **Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ *չկա:***

1) ակնաբույժ, կապտերանգ, համընթաց
2) մաքրամաքուր, մանրիկ, հագնվել
3) ձեռնտու, աստղաբույլ, երկնային
4) արդարև, գեղեցկություն, խառնիխուռն

6 **Ո՞ր շարքում բաց վանկ ունեցող բառ *չկա:***

1) գժդմնել, հիշեցնել, աշխարհիկ, բորբոքվել
2) հնչեցնել, հյուսվածք, բոցկլտալ, կրակոտ
3) ժանգոտվել, ժպտերես, ինքնուս, ինչքան
4) ընթերցել, ընկղմել, դազգահ, գանգատվել

7 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1) Մտամոլոր շրջում էր պատանին՝ հիանալով ականակիտ ու պաղպաջուն աղբյուրների քչքչոցով:
2) Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու, Հեքիաթի պես էր, երազի նման:
3) Գունաներկով շպարված օրիորդը միանգամայն տարբերվում էր իր շրջապատի կանանցից:
4) Աշուն է. օրերը ցրտում են, Գիշերը սուզվում է միգում:

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածանցավոր:**

1) հոտավետ, գործոն, հրաման, խորոված
2) երկաթյա, ազդու, գառնարած, ջլուտ
3) միջոց, փեսացու, դանակ, օրրան
4) տարեկան, բացատ, գյուղացի, գուժկան

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ:**

1) որմնասյուն, կողմնացույց, լռակյաց, հակադարձ
2) բանահավաք, վեհաշուք, կաթնագույն, կոշկակար
3) հանքանյութ, ծաղկեպսակ, ոսկրախտ, ունկնդիր
4) նրբանկատ, արևկող, մեծարժեք, ճրագալույց

10 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:**

1) **շեղք** – դանակի կտրող մաս, **վարկած** – գիտական ենթադրություն
2) **սամում** – ավազախառն տաք հող, **մույկ** – կամարակապ որմնախորշ
3) **ռահվիրա** – որևէ բանի սկզբնավորող, **մածուցիկ** – կպչուն հատկություն ունեցող
4) **մարմաջ** – բուռն ձգտում, **կոնդակ** – կաթողիկոսի պաշտոնական գրություն

11 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) կառամատույց = կառ+ա+մատ+ույց
2) ծաղկաշղթա= ծաղ+(ի)կ+ա+շղթա
3) խմբագրել=խ(ու)մբ+ա+գ(ի)ր+ել
4) ուսուցչապետ= ուս+ու(յ)ց+(ի)չ+ա+պետ

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:**

1) բուժանձնակազմ, խոտհունձ, սանհանգույց, գիտխորհուրդ
2) գազապաստարան, հրամկազմ, փողոկը, ծնողկոմիտե
3) սոցկայք, տնտհաշվարկ, վիճվարչություն, պետտուրք
4) հրետգունդ, կենցաղսպասարկում, միջբուհական, դատաբժիշկ

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) նախադուռ, գառ, տոհմանուն, գումարում
2) աշուն, շարժում, լեռ, խիզախություն
3) լուծում, ձիաբեռ, թոռ, հացատուն
4) ընդմիջում, օձաձուկ, ծունկ, մանուկ

14 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Մենք խաղաղ էինք մեր լեռների պես:
2) Առանց ընկճելու երկրի թշնամուն՝ Նրա սուրը երբեք չի մտել պատյան:
3) Ես գիտեմ՝ մի օր պիտի չքանաս Որպես մի երազ՝ չծնված բնավ:
4) Մենք էլ նստում էինք այնքան, մինչև քունը հաղթեր, գլուխներս հենեինք քուրսու թախտին:

15 **Ո՞ր նախադասության մեջ անկախ դերբայ *չկա:***

1) Նա հավատարիմ էր մնացել իր ամենօրյա սովորությանը՝ թեյի ժամանակ լրագիր կարդալուն:
2) Սիզիփոսը հին հունական դիցաբանության մեջ համարվել է աստվածների կամայականություններին ընդդիմացող հերոս:
3) Հոմերոսն է Սիզիփոսին նկարագրել որպես աստվածների ու մարդկանց օրենքներին անհնազանդ, փառասեր ու արատավոր մարդ:
4) Ցո՛ւյց տուր ինձ, գնամ, հավիտենությո՛ւն, Իմ ծնված օրվա շիրիմը համբուրեմ:

16 **Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ *չկա:***

1) Առավոտյան վաղ արթնացած սպասավորները շտկում էին ոսկեծոպ վարագույրները:
2) Իշխանն անհամբեր նայում էր ճանապարհին. սիրտը վատ բան էր գուշակում:
3) Սերոբը աղբյուրի մոտ մի փոքրիկ հողակտոր վերցրեց՝ հավաքելով այդ տարածքի աղբը:
4) Սպասուհիները հապշտապ սենյակ էին մտնում, փռում էին սփռոցները ու շարում արծաթե սպասքը:

17 **Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայ *չկա:***

1) Չի զիջել նա իր արմատը վերջին Արհավիրքների զարկին անխնա:
2) Չի դավաճանում ոչ մի ժամանակ Հյուրընկալության հինավուրց ոճին:
3) Մի տեսակ տագնապ կա, որ Չես ասի ոչ մի բառով:
4) Չտխրեք, թե որ տեսնեք Իմ տեղը թափուր, կռունկնե՛ր:

18 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Պատարագն սկսելուց առաջ հայրենասիրական ճառ ասաց:
2) Ամեն ուրբաթ այգեստանցիները լինում էին այնտեղ:
3) Պատանի հասակում հեռացել էր տնից:
4) Այդ դեպքից հետո նա ժամացույց այլևս չգնեց:

19 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Պարզապես անհավատալի էր, …… թաղամասի մարդիկ, լսելով Սելինայի մահվան լուրը, անմիջապես մի կողմ էին թողել իրենց ամենօրյա գործերը և շտապել դեպքի վայր:

1) ինչպես
2) երբ
3) որ
4) եթե

20 **Ո՞ր շարքում թվական *չկա:***

1) այսքան, միլիարդ, միակ
2) երկուական, տասնամյա, հազարավոր
3) հարյուրյակ, բազմիցս, որերորդ
4) տասնեորդ, բազմահազարանոց, եռակի

21 **Ո՞րն է պարզ նախադասություն:**

1) Հորիզոնը կարծես պատել է բաց կարմիր մի հրդեհ, մինչև անգամ փողոցի փոշին վարդագույնին է տալիս:
2) Տառերը սովորելուց և հեգելով կարդալուց հետո մենք, հեռանալով վարժապետի մոտից, գնացինք դպրոց:
3) Հյուսիսի իրենց լեռներից նրանք իջան՝ ձիերի երախակալները պինդ բռնած, մտան ասորական հարթավայր:
4) Ե՛վ արևն էր այրում նրանց մարմինը, և՛ ցուրտն էր խոշտանգում նրանց:

22 **Բաց թողած տեղերում ո՞ր տարբերակի բառաձևերը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Մեծ …….կրակը ……. ՝ մարդիկ տեսան, որ ծառի մեջ ……. ածխացած մի հսկա վերք, ……. մոմերի բացած վերքը:

1) ճիգով, հանգցնելով, մնացել է, այրված
2) ճիգով, հանգցնում են, մնում է, այրվող
3) ճիգից, հանգցնող, կմնա, այրվելիս
4) ճիգերով, հանգցրած, մնալու է, այրվող

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Երբ կինը հանկարծ տխրում էր և խոնարհում աչքերը, երիտասարդը նրան սրտապնդելու համար ջանում էր վստահ ու վճռական տեսք ընդունել, սակայն դա նրան միշտ չէր հաջողվում, և երբեմն ինքն էլ էր հուզվում՝ չդիմանալով լարումին:

1) 

2) 

3) 

4) 

24 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը դերբայական դարձված:**

1) Ինձ համար դա մեծ թեթևություն էր, իսկ նրա համար՝ **սարսափելի հարված**:
2) Հին պատմության ուսուցչուհին շատ գոհ էր **այս աննշան թեմայի շուրջ արտասանված** հարուստ ճառից:
3) Բանն այն է, որ **իրենք էլ անհանգստանալով** գնացել էին գետափ:
4) **Հոսանքի արագ ընթացքից** մյուս ափը մեզ անսահման հեռու էր թվում:

25 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

1) *Համբարձումը չէր վիրավորվում իր մասին արտասանված սրախոսություններից:*
   Համբարձումը չէր վիրավորվում, երբ իր մասին սրախոսություններ էին արտասանվում:
2) *Դեզդեմոնա խաղալու էր Արուսը՝ այդ դերին հարմար եկող միակ դերասանուհին թատրոնում:*
   Դեզդեմոնա խաղալու էր Արուսը, որը այդ դերին հարմար եկող միակ դերասանուհին էր թատրոնում:
3) *Ագահությունը հանկարծակիի է գալիս անակնկալ հարստացածի առատաձեռնությունից:*
   Ագահությունը հանկարծակիի է գալիս նրա առատաձեռնությունից, ով անակնկալ է հարստացել:
4) *Հորեղբայրս, գինետնից հարբած դուրս գալով, հանդիպում է իր քրոջ որդուն:*
   Երբ հորեղբայրս հարբած դուրս է գալիս գինետնից, հանդիպում է իր քրոջ որդուն:

26 **Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Որպես փյունիկ կրակից կելնես կելնես նոր Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:
2) Կանգնել էր բարձունքին որպես մի արծիվ:
3) Բոլորը հարգում են նրան որպես մեծ գիտնականի:
4) Արջը հարվածից գլորվեց որպես մի կոտրված ծառ:

27 **Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:**

1) Մեկը թախծագին նայում է **հեռուն**:
2) Քեզ մոտ եմ եկել այն հույսով, որ **ինձ** նեցուկ կլինես այս դժվար պահին:
3) **Ո՞վ** պիտի գա, գուցե գունատ մի ստվեր Լուռ ներս սողա ու նորից լուռ չքանա:
4) Վեր բարձրացրեց խոնարհած **գլուխը** և ուշադիր զննեց շրջապատը:

28 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Նավը տաշեղի պես ելնում էր վերև, և տեսնողին թվում էր, թե ուր որ է կխորտակվի:
2) Ինչ ճանապարհով էր հետ բերելու տանուլ տված ահռելի գումարները՝ նա չէր պատկերացնում, և մտածելիս գլուխը պտտվում էր:
3) Շուտով մի ոսկեպատ գավաթի վրա նկարել տվեց վեհանձն սպարապետի պատկերը՝ ճերմակ ձի հեծած և խնջույքների ժամանակ այն դնում էր իր առջև:
4) Չդիմանալով ստորգետնյա զարհուրելի ցնցումներին՝ ծնկներից կոտրվեց ու տապալվեց Հելիոսի՝ աշխարհին հիացնող ու ապշեցնող արձանը:

29 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Այդ հարվածները լսվում էին երբեմն կարճ և երբեմն երկար ընդհատումներով, և սպիտակ քարը փշրվում էր և թափվում գետնին:
2. Հովնաթանը քանդակում էր ամեն օր. լուսաբացից մինչև մայրամուտ լսվում էին նրա մուրճի հարվածները՝ խուլ և խորը, ինչպես սրտի բաբախյուններ:
3. Արվեստանոցը հետզհետե սկսեց շնչել արձանիկների բազմությամբ, սկզբնական օրերի ամայությունը լցվեց կենդանի շնչով, պատերի առաջ, դարակներին, ամեն կետում քարե ու կավե արձանիկներ շարվեցին:
4. Հովնաթանը աշխատում էր ոչ միայն սպիտակ քարով. քանդակում էր նաև կավից:

1) 4, 2, 3, 1
2) 2, 3, 4, 1
3) 4, 1, 2, 3
4) 2, 1, 4, 3

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Իջավ սարյակը դաշտում. ծիլ էր կտուցին.
Շուրթիս վրա մի կանաչ տող էր թպրտում:
Կռռաց ագռավը ձորում. ձյուն էր կտուցին.
Սրտիս վրա մի ճերմակ տող էր թպրտում:

1) փոխաբերություն
2) մակդիր
3) հանգավորում
4) համեմատություն

31 **Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

1) Պատմագրության մեջ պատմական անձինք հանդես են գալիս որպես պատմագեղարվեստական կերպարներ:
2) Պատմագրությունը Ոսկեդարի հայ մատենագրության ամենահարուստ բաժինն է:
3) 5-րդ դարի պատմիչների գործերում պատմական փաստերը շարադրված են պատկերավոր լեզվով, ճարտասանական հնարքներով:
4) Պատմագրության նյութը քրիստոնեական հավատի համար զոհված և սրբացված մարդկանց նահատակության պատմությունն է:

32 **Ո՞ր հատվածը Ե. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմից *չէ:***

1) Զգում էինք, որ- մի մութ թշնամի
Նենգ, դարան մտած, պահվել է հեռուն…
2) Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
3) Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի…
4) Ու պե՜տք է քայլե՜լ ու քայլե՜լ համառ՝
Ապրելու հսկա տենչը բեռ արած…

33 **Ա. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի ավարտի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Լևոնը դառնում է հռչակավոր երաժիշտ:
2) Լևոնը «Խերսոն» շոգենավով Իտալիա է մեկնում:
3) Լուիզայից մերժում ստանալուց հետո Լևոնը դառնում է հարբեցող:
4) Լևոնը ինքնասպան է լինում՝ իմանալով Լուիզայի ամուսնության մասին:

34 **Հատվածներից ո՞րը Հ. Սահյանի որ բանաստեղծությունից է:**

ա. Ճանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:

բ. Նստում էին և սպասում,
Մինչև պապը գար,
Մինչև բակում Ճաղիկ եզան
Զանգը ծլնգար:

գ. Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ…

դ. Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,
Մրսում էր կարծես վայրի նշենին,
Հանգստանում էր հողմը բացատում՝
Ականջն ամպրոպի ազդանշանին:

1. «Օրը մթնեց»
2. «Անունդ տալիս»
3. «Անտառում»
4. «Քարափը»

1) ա–1, բ–3, գ–2, դ–4
2) ա–4, բ–1, գ–2, դ–3
3) ա–1, բ–4, գ–2, դ–3
4) ա–4, բ–1, գ–3, դ–2

35 **Գ. Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի համանուն հերոսը գողությամբ էր զբաղվում՝**

1) ապրուստի միջոց հայթայթելու նպատակով:
2) սիրած աղջկա՝ Վասիլիկի քմահաճույքներին գոհացում տալու համար:
3) դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար:
4) համաքաղաքացիներից վրեժ լուծելու համար:

36 **Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի դրվագներից մեկում ո՞ր հերոսն է նկարագրվում հետևյալ կերպ.**

Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արևոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:

1) ծերունին
2) Մոսին
3) Անուշը
4) Սարոն

37 **Նշվածներից ո՞րը պոեմ *չէ:***

1) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Իսահակյան)
2) «Թմկաբերդի առումը» (Հ. Թումանյան)
3) «Հարճը» (Դ. Վարուժան)
4) «Ամբոխները խելագարված» (Ե. Չարենց)

38 **Ա. Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ կա:**

1) Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:
2) Հեղինակ-հերոսը՝ 17-18 տարեկան մի երիտասարդ՝ բանտից նոր դուրս եկած, իր բարեկամի առաջարկով գնում է Ձորագյուղ և զբաղվում ուսուցչությամբ:
3) Ուսուցիչը Խոնարհին առաջին անգամ տեսնում է անտառի բացատում:
4) Բարեկենդանի օրը ուսուցիչը Խոնարհին տեսնում է աղջիկների հետ մի տան կտուրի վրա ձյունով խաղալիս:

39 **Նախադասություններից քանիսո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- Նա զգում էր, որ իր համար թանկ են ընկերոջ դեմքը, ձայնը, քայլվածքը, անգամ սովորությունները:
- Ասում էր, որ իր խիղճը հանգստացել է, և ինքն արդեն ուրախ է:
- Մենք մեծագույն հաճույք էինք ստանում՝ ականջալուր լինելով մեր մեծերի իմաստուն զրույցներին:
- Վերջապես ձեռք բերեցինք նոր դասագրքերը և պիտի բարեխղճորեն պատրաստվենք քննություններին:

40 **Բանաստեղծություններից քանիսի՞ հեղինակն է Մ. Մեծարենցը:**

«Արևին», «Նավակները», «Հիվանդ է», «Աքասիաներու շուքին տակ», «Վայրկյան», «Իմ ցավը», «Ջարդը», «Տխրություն», «Հովը»:

41 **Շարքերից քանիսի՞ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը կամ տառակապակցությունը:**

- մակույ–, ա–ցան, փեղ–, անհար–ի
- խա–ույկ, իրարամե–ժ, բու–վառ, ա–ժանիք
- եղ–րերգ, ափ–ափ, լուսն–ջք, նախսօր–
- կար–եր, ոսկ–որել, ագ–ազ, ալ–արս
- նր–աճաշակ, խարխա–ել, ար–շիռ, գրա–ար

42 **Շարքերից քանիսի՞ բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- քամահրել, վատաբանել, դրվատել, նախատել
- ճախրել, թռչել, ճողոպրել, սավառնել
- ակնապիշ, սևեռուն, ուշադիր, անքթիթ
- բիլ, լուրթ, կապուտակ, մով

43 **Տրված բառերից քանիսի՞ հոգնակին է կազմվում -*եր* վերջավորությամբ.**

լրագիր, բնագետ, ջերմաչափ, հորաքույր, հերակալ, հանքահոր, սպա, աստիճանացույց, գիսաստղ:

44 **Տրված հատվածում քանի՞ միջակետ պիտի դրվի:**

Որևէ բան փոխելն անհնար էր վճիռն արդեն կայացվել էր: Կուսակալը անզոր նայեց ինքն իր ներսը ներսում դատարկություն էր: Հանկարծ նրան զարմացրեց մի միտք դատապարտյալի հետ խոսելիս ակնհայտորեն ինչ-որ բան մինչև վերջ չէր ասվել: Ինքն էլ չհասցրեց ընկալել ամենակարևորը Յեշուան խոսում էր հանելուկային անմահությունից իսկ թե ում անմահության մասին էր խոսում ինքն այդպես էլ չի իմանա:

45 **Նշել այն դարձվածքների համարները, որոնց իմաստը սխալ է բացատրված.**

1. ***յոթերորդ երկնքում լինել*** –իրավիճակին անտեղյակ լինել, 2. ***քամու բերած*** – հեշտությամբ ձեռք բերված, 3. ***արքուն աչքերով***–սթափ կերպով, 4. ***առաջին շարքերում***–մի բանի ակտիվ մասնակից, 5. ***երեսի վրա թողնել*** –ուշադրության կենտրոնում պահել, 6. ***առաջին ջութակ***–գլխավոր դեմք:

46 **Ո՞ր բառերն են գրվում գծիկով:**

1. գիշեր(ցերեկ), 2. ուս(ուսի), 3. հարավ(արևմուտք), 4. դեփ(դեղին), 5. մեն(մենակ), 6. ձյուն(ձմեռ), 7. երեք(ամյա), 8. տասը(տասնհինգ), 9. դեմ(հանդիման):

47 **Ո՞ր նախադասություններում շաղկապի սխալ կիրառություն կա:**

1. Թե մահը չլիներ, չէին լինի հիվանդություն և ծերություն, քաղց ու կախաղան:
2. Ոչ միայն չէր կատարել հանձնարարված աշխատանքը, այլ մյուսներին էլ խանգարել էր, որ չկարողանային աշխատել:
3. Ուզում եմ, որպեսզի միշտ ծաղկի իմ երկիրը:
4. Ոչ թե պետք է քննադատել նրան, այլ ճիշտ ներկայացնել կատարվածը:
5. Թեև ձյունը փակել էր ճանապարհը, այնուամենայնիվ ոչ մեկի մտքով չէր անցնում հետ դառնալ:

48 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում ընդգծվածը գերադաս նախադասություն է:**

1. <u>Ասում են</u>՝ հայոց լեռները եղբայրներ են եղել, հսկա եղբայրներ՝ միմյանց նկատմամբ սիրով լի:
2. Վազեցինք և <u>փոսի մեջ տեսանք ծեր աղվեսին</u>, որ կծկվել, կուչ էր եկել ու դունչը մոտեցրել էր վերքին:
3. Նա որդուն մատնացույց արեց հետնադուռը, որ խանութից տուն էր տանում, և որդին հնազանդ, շատ մռայլ տեսքով դուրս գալով խանութից, <u>**տուն մտավ**</u>**:**
4. Միանգամայն սթափ վիճակում էի, բայց այդ վայրերում ծնված ու մեծացած որսորդս, <u>**չգիտես ինչու,**</u> սկսեցի հեկեկալ թպրտացող սրտիս համակած տարօրինակ ճնշումից:

49 **Հատվածներից որո՞նք են միջին հայերենով:**

1. Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս,
   Լեզուս իմ հանց պըտուղ կուտայ:
2. Մեծցայ, սիրու տէր եղայ,
   երեսիս գոյնըն կու գընայ.
   Մանկտի՛ք, ձեր արև՞ն ասեմ,
   որ սիրուն քարընն չի դիմնայ…
3. Կը սիրեմ անոնց նյուսը բյուրաձալ,
   Ռունգերնին տամուկ, բիբերնին խոշոր:
4. Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝
   Տեսանելով այսպես սեր
   Դեպի թշվառ մի հայրենիք,
   Որ ոտնակոխ եղած էր:

50 **Նշել այն հատվածների համարները, որոնք Վ. Տերյանի բանաստեղծություններից են:**

1. Կար հեռու մի երկիր թովչական,
   Արև էր ոսկեղեն աշխարհում.
   Շողացին, ժպտացին -էլ չկան,
   Էլ չկան պատրանքները սիրուն:
2. Բայց հին ու նոր քո երգերով կանգնած ես դու կենդանի,
   Կանգնած՝ խոհո՞ւն, խորհրդավոր ճամփին հնի ու նորի…
3. Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,
   Արքայական խոսքը մեր կմնա հավետ:
4. Վտարանդի, երկրում աղոտ,
   Լուսե՞ղ, քեզ եմ երազում…
5. Եվ կարոտակեզ ահա կրկին
   Վերադառնում եմ, որ առհավետ
   Ունկնդիր լինեմ քո հին երգին
   Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ...

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ը:***

1) որոտ-նդոստ, ան-նդմեջ, ան-նտել, ակ-նդետ
2) մթ-նկա, գահ-նկեց, այլ-նտրանք, խոչ-նդոտ
3) ան-նկեր, մարտ-նչել, ճեպ-նթաց, ան-նդունակ
4) հնդկ-նկույզ, օր-ստորե, ան-ստգյուտ, շր-խկ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է թավ գրված *ե*-ն արտասանվում *է:***

1) գետեզր, համերկրացի, վրաերթ
2) աներես, մակերիկամ, ինքնաեռ
3) վերելք, նախերգանք, նրբերշիկ
4) տասներեք, կիսաեփ, տիեզերք

53 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) խոժոռվել–ժպտալ, թերի–ավարտուն, փութկոտ–ծանրաշարժ
2) ծածուկ–բացեիբաց, խռով–հաշտ, խոնարհ–ամբարտավան
3) անխոհեմ–ներհուն, տնտեսել–շռայլել, արի–վեհերոտ
4) հետամտել–խուսափել, ողորկ–անհարթ, ամոքել–սփոփել

54 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կա միևնույն ածանցը:**

1) մակերես, մակաբույծ, մակնիշ, մակդիր
2) փոխադրել, փոխանակ, փոխարքա, փոխհրաձգություն
3) անբասիր, անբավ, անբնակ, անդրբևեռային
4) գերխիտ, գերակա, գերեվարել, գերաշնորհ

55 **Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության ո՞ր տարբերակում սխալ *չկա:***

Վանականը, զգուշորեն շուրջբոլորը նայելով, բարձրացավ ու թաքնվեց բարձր որձաքարերի միջև և ծոցից հանելով մի քառածալ մագաղաթ՝ անձկությամբ սկսեց ընթերցել:

1) **անձկությամբ** – ձևի մակբայ, **հանելով** – պարզ բայ, գործիական հոլով
2) **թաքնվեց** – անցյալ կատարյալ, չեզոք սեռ, **շուրջբոլորը** – տեղի մակբայ
3) **մի** – անորոշ դերանուն, **ընթերցել** – վաղակատար դերբայ, ներգործական սեռ
4) **բարձրացավ** – պատճառական բայ, **միջև** – կապ, հետադրություն

56 **Ո՞ր շարքում անկանոն բայ *չկա:***

1) խոնավանալ, իջնել, դառնալ, շնչել
2) երգել, ուրախացնել, պատմել, բերել
3) լրջանալ, կանչել, հանդգնել, տանել
4) գնալ, քայլել, թռչել, մտնել

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

1) երևի, հիրավի, սոսկ
2) իսկապես, գուցե, պատահաբար
3) երիցս, միմիայն, ցավոք
4) իսկ և իսկ, արդեն, գեթ

58 **Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

1) Նա սկսեց հետևել խանութպանի ձեռքի շարժումներին:
2) Նրանք լուռ անցնում էին կաղնու և մասրենու թփերով եզերված սայլուղին:
3) Մոռացել եմ ես ամենքին, Միայն քեզ եմ ես հիշում…
4) Ժայռի կատարին փթթում է ճերմակազգեստ մասրենին:

59 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Նրանք քաջաբար մարտնչում էին թշնամու գերակշիռ ուժերի դեմ:
2) Արաբներից կրած պարտությունից հետո արքան վախենում էր նախարարներին հանդիպելուց:
3) Հայրը միշտ սատարել էր որդու բոլոր ձեռնարկումներին:
4) Ծանոթանալով գործի փաստաթղթերին՝ քննիչը խճճվել էր. թվում էր՝ ձերբակալել են լրիվ անմեղ մեկին:

60 **Ո՞ր տարբերակում ժամանակի պարագա ստորադաս նախադասություն *չկա:***

1) Բոլորը հասկացան՝ հենց Արամայիսն է խանգարելու գործի կարգավորմանը:
2) Ու հենց շողաց ցոլքն արևի, Անտես, անհետ, չքացան:
3) Լեռնաշղթայի փեշերին հասան թե չէ, երեխաները ցրվեցին տարբեր կողմեր:
4) Ժամանակը մինչև չգա, չասեք, թե ձեր տերը չեմ ես:

61 **Պ. Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Բարեկամաբար ասացե՛ք նաև.
Քանի՞ տարին մեկ աշխարհ է գալու
Այն անդերսենյան մանուկը,
Որից
Թագավորները պիտի իմանան,
Որ մերկ են իրենք:

1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
4) «Վարք մեծաց»

62 **Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի տրված հատվածը ո՞ր հերոսին է վերաբերում:**

«Նա չդիպավ աղքատիկ ճաշին, որ բերել էին նրա համար, միայն վեր առեց խեցեղեն ամանը, խմեց ջուրը՝ փոքր-ինչ զովացնելու սրտի տապը: Հետո անցավ, ընկողմանեց յուր հարդյա անկողնի մեջ: Նա դարձյալ շարունակեց նայել անշարժ արձանի վրա»:

1) Վասակ Մամիկոնյանին
2) Ներսես Մեծին
3) Արշակ Երկրորդին
4) Սամվելին

63 **Տրված հատվածում քանի՞ դերանուն կա:**

Նա հիսունին մոտ մարդ էր, երբ մի քանի տարի առաջ երևաց մորաքրոջս տանը և հետաքրքրվում էր հարմար սենյակով: Այդ մարդն ապրում էր շատ անաղմուկ, և եթե չլիներ մեր ննջասենյակների մոտիկությունը, առհասարակ անձանոթ կմնայինք միմյանց:

64 **Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավանկ.**

քմահաճ, վաղանցիկ, հայրենական, դիպաշարային, բազմահնար, սալջարդ, շքահանդես, բնավեր, երազահան:

65 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծված անդամի պաշտոնը ճիշտ նշված:**

- Եվ աստծուն լսելի եղան Խայամի տրտունջն ու **հանդիմանությունը:** *(ենթակա)*
- Իշխանը ձին ասպանդակեց ու արագ հեռացավ **այդտեղից:** *(անջատման անուղղակի խնդիր)*
- Աղջկա հետևից հասանք, և **ամեն ինչ** պարզ դարձավ մեզ համար: *(ուղիղ խնդիր)*
- **Տեղը տեղին** վճարելով վարորդին՝ իջավ մեքենայից: *(տեղի պարագա)*

66 **Նշել այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Չքնաղ է Սևանը տարվա բոլոր եղանակներին(1) թե գարնան արևոտ օրը թե ամռան աստղազարդ գիշերին թե աշնան հողմերին երբ մռնչում է(2) փրփրաբաշ ալիքները առափնյա ժայռերին զարկելով: Պիտի ապրես նրա ափին(3) պարզորոշ տեսնելու համար(4) ինչպես է շարունակ փոփոխում իր երանգները(5) քնքուշ նազում հետո քիչ-քիչ մռայլվում(6) խոժոռ շանթեր արձակելով իսկ երբեմն էլ քեզ թվում է(7) արեգակը(8) երկնքից իջնելով(9) ցոլում է նրա պաղպաջուն ջրերում:

67 **Ո՞ր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:**

1. գետնաքարշ, 2. գիտնական, 3. պատմաբան, 4. թռչնաբույծ, 5. օրինավոր, 6. ընչազուրկ, 7. միութենական, 8. թիկնապահ, 9. փափկասուն:

68 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

21-րդ դարը ցույց տվեց, թե որքան կործանարար կարող են լինել կլիմայական փոփոխությունները: 2002թ. ջրհեղեղներից Եվրոպայում մի քանի հազար մարդ մահացավ. նույնը կարելի է ասել 2013թ. Ռուսաստանի արևելքում աշնանային հեղեղումների մասին: 2003-ի տապը եվրոպական մասում 35.000 մարդու մահվան պատճառ դարձավ: Գիտնականներն ավելի մռայլ կանխատեսումներ են կատարում ապագայի վերաբերյալ, ինչպես՝ արևադարձային Բրիտանիա, մալարիայով տառապող Ֆրանսիա, անապատային Իսպանիա: Բարեխառն գոտիներում սովորական բան կլինեն արևադարձային մոծակները, որոնց պատճառով դրանց բնակիչները կսկսեն վարակվել մինչ այդ իրենց անհայտ հիվանդություններով: Նախկինում անվնաս միջատները կդառնան կատաղի վնասատուներ՝ խիստ վտանգավոր գյուղատնտեսության համար, երաշտները կհանգեցնեն ջրի պակասի, հաճախակի կդառնան համաճարակները, մոլորակի վրա պայքար կգնա ավելի շատ սննդի և ջրի, քան էներգետիկ ռեսուրսների համար:

Վերջին հարյուրամյակում օդի ջերմաստիճանի բարձրացում է գրանցվել՝ 0,3-0,7 աստիճան: Եթե այս երևույթը շարունակվի, կհանգեցնի Սառուցյալ օվկիանոսի սառույցների հալեցման, երկրագնդի ողջ ջրային ծածկույթի մակարդակի բարձրացման և շատ վայրերի ջրասուզման: Կսկսվի դրանց բնակիչների մեծ տեղաշարժ մի վայրից մյուսը:

1. Ջերմաստիճանի առանձնակի խիստ բարձրացում է դիտվում Սառուցյալ օվկիանոսի շրջանում:
2. Կլիմայական փոփոխությունների պատճառով բարեխառն գոտիներում արևադարձային մոծակներից հարուցվող հիվանդություններ կտարածվեն:
3. Ջերմաստիճանի բարձրացման հետևանքով որոշ բնակելի վայրեր ջրի տակ կանցնեն:
4. Գիտնականների ամենամեծ անհանգստությունները վերաբերում են էներգետիկ պաշարների սպառմանը:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ածանցավոր են այն բայերը, որոնց կազմում կա որևէ բայական կամ այլ ածանց:
2. ***Ն, չ*** սոսկածանցներն ընկնում են սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերում և հրամայականում:
3. ***Տալ*** հարադրությամբ կազմված բոլոր բայերը պատճառական են:
4. Պատճառական ածանց ունեցող բոլոր բայերի եզակի հրամայականը կազմվում է ***ու*** վերջավորությամբ:
5. Պատճառական ածանց ունեցող բայերի և ***ե*** խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևերը տարբեր կազմություններ ունեն:
6. Բազմապատկական բոլոր բայերը ***ե*** խոնարհման են:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Վերջավորություններ են միայն հոլովական մասնիկները:
2. Ածանցները և վերջավորությունները, փոխելով բառի իմաստը, նոր բառ են կազմում:
3. Եթե բառը ունի մի քանի վերջավորություն, ապա բառի հիմքը վերջին վերջավորությունից առաջ ընկած մասն է:
4. Բարդ բառերի բաղադրիչ արմատները կարող են կապակցվել հոդակապով, ինչպես նաև ***և***-ով, ***ու***-ով:
5. Մեկից ավելի արմատ և մեկ կամ ավելի ածանց ունեցող բառերը բարդածանցավոր բառեր են:
6. Բառը բառիմաստ և ինքնուրույն գործածություն ունեցող միավոր է: